

ՀՏԴ 371.31: 809.198.1

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

**ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ
«ՄԱՅՐԵՆԻԻ» ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ
Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ**

Բանալի բառեր - խոսք, ուսուցում, մեթոդ, հմար, միջոցներ, զարգացում, դաստի, ինքնուրույնություն, վարժություններ, աշխատանք, բացատրություններ, համագործակցություն, հարցադրումներ, բառապաշար:

Ключевые слова - речь, обучение, метод, умение, ресурсы, развитие, судить, независимость упражнения, работа, пояснения, сотрудничество, вопросы, словарный запас

Keywords -speech, training, method, skill, resources, development, adjudicate, independence, exercises, work, explanations, cooperation, questions, vocabulary

Շ. Ասրատյան

**Самостоятельное развитие речи ученика средней школы при помощи
учебников по «Родному языку»**

В данной статье обсуждается способы расширения знаний ученика, развить у них логику, когнитивные качества, самостоятельность, навыки составление грамотной и образной речи, коммуникативных умений и навыков, обогащение словарного запаса, свободное владение армянским литературным языком. Для развития вышеперечисленных качеств, в книгах родного языка 5-6-х классов, в разделе заданий и практических вопросов введен подраздел «словарная работа и работа с текстом», которая является достаточно продуктивным средством. Новизна этого раздела направлена на решение обсуждаемых проблем.

Ts. Asratyan

**Independent Development of the Speech of the High School Student
by Means of the Textbooks "The Native Language"**

The article discusses the ways of expanding a student's knowledge, developing logic, cognitive qualities, independence, skills of competent and figurative speech, communication, enriching vocabulary, fluency in the Armenian literary language. For developing the above-mentioned qualities a subsection "Dictionary Work and Work with the Text" is introduced in the section of tasks and practical questions for the 5-6th grades. The novelty of this section helps to solve the discussed problems.

Սույն հոդվածում քննվում են աշակերտների ինքնուրույն խոսքի և գիտելիքների զարգացմանը, տրամաբանությանը, ճանաչողական որակներին, ինքնուրույնությանը, գրագետ ու պատկերավոր խոսք կազմելու և հաղորդակցվելու հմտություններին, ինչպես նաև բառապաշարի հարստացմանը նպաստող մի շարք մեթոդներ ու միջոցներ: Վերը նշվածների համար արդյունավետ միջոց է 5-6-րդ դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված առաջադրանքներ և գործնական հարցեր բաժնի «Բառային աշխատանքներ» և «Տեքստային աշխատանքներ» ենթաբաժինը: Նշված առաջադրանքները բավականաչափ հետաքրքիր ու արդյունավետ են, որոնք էլ նպատակաուղղված են քննարկվելիք խնդիրների լուծմանը:

**Հայոց լեզուն հարուստ լեզու է, և արժե,
որ մարդ չարչարվի այն սովորելու համար:
Ջորջ Բայրոն**

Այսօր, երբ պետականորեն դրված է հայոց լեզվի բարելավման և համակողմանի կիրառության ընդլայնման հարցը, առավել մեծ ուշադրություն է դրվում վերջինիս կարևորագույն պահանջներից մեկի՝ խոսքի զարգացման վրա: Մայրենիին անձնուրաց նվիրված ուսուցիչը պետք է ջանք չխնայի զարգացնելու և հարստացնելու աշակերտի ինքնուրույն և պատկերավոր խոսքը: Ցավալի իրողություն է, ինչպես նաև մտահոգության պատճառ այն, որ մեր հանրակրթական դպրոցների աշակերտների գեղեցիկ, գրագետ, ինքնուրույն և պատկերավոր կապակցված խոսք կազմելու կարողությունը բավականին թույլ է: Ինչպես անել, ի՞նչ միջոցներ ձեռնարկել, որպեսզի խթանենք այդ պատճառների վերացումը: Այս առիթով փորձենք հնարավորինս լուսաբանել և ներկայացնել ուսուցման արդյունավետ մեթոդներ ու հնարներ: Ակնհայտ է, որ խոսքի զարգացման միջոցները շատ են ու բազմաբնույթ: Ուսուցիչը, սակայն, պետք է կիրառի նոր մոտեցումներ, ընտրի լավագույն միջոցներ, ստեղծի բոլոր բարենպաստ պայմանները, որոնք աշակերտին կմղեն ինքնուրույն դաստի, ճիշտ ու մաքուր հայերենով խոսելու, պատկերավոր խոսք կառուցելու՝ անշուշտ այս ամենը համատեղելով թեմայի ուսուցման հետ: «Ինքնուրույնության ձևավորումը հոգեբանական բարդ գործընթաց է, և եթե ուսուցիչը իր առջև խնդիր է

դրել ձևավորելու ակտիվ և ինքնագործ անձնավորություն, որն օժտված է զարգացած բարդ բանականությամբ և ստեղծագործական ընդունակություններով, ապա նա ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդներն ու կառուցվածքը պետք է ստեղծի հոգեբանության ձեռք բերած տվյալների վրա, ինչպես նաև հաշվի առնի աշակերտի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները»¹։ Չմոռանանք, որ այդ տարիքի երեխաների մոտ ինքնուրույնությունը բացակայում է, հետևաբար ուսուցիչը պետք է նրանց մոտ ինքնուրույն աշխատելու ցանկություն արթնացնի և սովորեցնի զգալ, թե հաճույքի և ուրախության ինչպիսի անսպառ աղբյուր կարող է դառնալ գործունեությունը։ Իսկ հոգեբան, պրոֆ. Ա. Նալչաջյանը գտնում է, որ ինքնուրույնության բացակայությունը պայմանավորված է անձի մտավոր զարգացման և խնդիրներ լուծելու փորձի թուլությամբ։ Ինքնուրույնությունից զուրկ մարդիկ վստահ չեն իրենց մտավոր կարողություններին ու փորձին, երբ պետք է ինքնուրույն գործել, նրանք շփոթվում են և անօգնական են դառնում։ Հենց այդ պատճառով էլ խուսափում են նման իրադրությունում հայտնվելուց։ Ուրեմն՝ այս փաստը հաշվի առնելով՝ ուսուցիչը պետք է ձևավորի նախ՝ աշակերտների ինքնուրույն աշխատելու, խոսք կառուցելու, հաղորդակցվելու կարողություններ, ապա՝ վարժությունների միջոցով ամրապնդի դրանք։

Նշենք, որ 5-6-րդ դասարանի մայրենիի դասագրքերում բացի վարժություններից մեծ տեղ են տրվում այնպիսի առաջադրանքների ու հարցերի, որոնք խթանում են սովորողի՝ սեփական կարծիքը հայտնելու կամ արտահայտելու պահանջը։ Վերջինս ուսուցչին մեծ հնարավորություն է տալիս իրականացնելու իր առջև դրված այդ աշխատատար, միաժամանակ օրախնդիր հարցը։ Եթե նախկինում ուսուցչին հուզում էր տեքստի վրա կատարվելիք աշխատանքների տեսակն ու բնույթը, ապա բառային և տեքստային աշխատանքների բաժինը տալիս է այդ հարցերի բոլոր պատասխանները։ Քանի որ վերոնշյալում արժարժվում են աշակերտի խոսքը զարգացնելու, պատկերավոր դարձնելու, ինքնուրույն խորհելու բազմաբնույթ հարցեր, ուրեմն՝ ուսուցիչը նշված գործընթացի առաջին քայլերը կարող է սկսել դեռևս այդ աշխատանքներից։

Սույն հոդվածով էլ կփորձենք սովորողների ինքնուրույն և պատկերավոր խոսք կազմելու արդյունավետ միջոց ընտրել գործնական հարցեր և առաջադրանքներ բաժնի «Բառային աշխատանքներ» և «Տեքստային աշխատանքներ» ենթաբաժինը։ Հարկ է նշել, որ այս բաժինը նորություն է. նախորդ դասագրքերում, երբ դեռ երկու առարկաների ուսուցումը միասնացված չէր տարվում, այն չկար։ Սակայն նոր կրթակարգի և միջնակարգ կրթության պետական չափորոշչի համաձայն՝ մայրենիի ամբողջ դասընթացը պիտի ունենա գործնական ուղղվածություն՝ ուշադրության կենտրոնում պահելով աշակերտի ուղղախոսությունը, ուղղագրությունը, ինքնուրույն ու գրագետ խոսք կազմելու հմտությունների զարգացումը²։ Ելնելով այս նպատակից՝ գործող դասագրքերում ամեն մի թեմայից հետո պարտադիր տրվում են բառային և տեքստային աշխատանքներ։ Այդ երկու առաջադրանքներն էլ նպատակաուղղված են քննարկվելիք խնդիրների լուծմանը։ Դրանցից մեկում պահանջվում է կատարել գոտ բառային աշխատանքներ, ինչպես՝ կազմել բառեր հետևյալ արմատներով, գտնել հոմանիշ և հականիշ բառերի գույգեր, գտնել -իկ վերջածանց ունեցող բառերը, դրանով ուրիշ բառեր կազմել, տեքստից դուրս գրել գույն մատնանշող հինգ բառ և այլն, իսկ մյուսում՝ աշխատանք տեքստի վրա։ Պահանջվում է վերլուծել գրական տարբեր երկեր, համեմատություններ, հակադրություններ, եզրահանգումներ անել, կարծիքներ հայտնել։ Առաջարկվում է հեքիաթ, առակ, բանաստեղծություն գրելու փորձեր անել։ Այս աշխատանքները աշակերտներին մտցնում են մտավոր որոնումների ոլորտը, պահանջում թեմայի շուրջ կարծիքը հիմնավորել ընդարձակ դատողությունների ու մտահանգումների միջոցով։ Առաջադրանքները հիմնականում դասավորված են կոնկրետից դեպի վերացականը, պարզից բարդը սկզբունքով։

Այսպես՝ 5-6-րդ դասարանի մայրենիի դասագրքերում³ առաջադրվում են այսպիսի աշխատանքներ.

1. Գտնել գեղեցիկ, կարծր, հսկա, դաժան բառերի հոմանիշները և հականիշները։

2. Ինչպես կմեկնաբանես տեքստի կապույտ գրված բառակապակցությունները. Իր փորած փոսն ընկավ, Որքան գետնի երեսին է, այնքան էլ գետնի տակ է։

3. Գտնել կարմիր գրված բառերի բացատրությունները. զգվել, կենսունակ, արքունիք, երախտապարտ, ողորկ, ցասում և այլն։

¹ Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, էջ 322, Եր., 1977թ.։

² Մեթոդական նամակներ, Մայրենի, 5 - 6-րդ դասարաններ, էջ 3, 2011-2012թթ.։

³ Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր., 2011թ.։

4. Շարադրիր հեքիաթի բովանդակությունն ըստ քո կազմած պլանի:

5. Տեքստում գտիր և դուրս գրիր կազմությամբ բարդ բառեր, դրանց արմատներով ուրիշ բառեր կազմիր:

6. Բո բառերով վերապատմիր պատմությունը:

7. Պատմվածքից դուրս գրել ժողովրդական-խոսակցական բառերը և գրել դրանց գրական համարժեքները:

8. Մեկնաբանել պատմության առաջին հատվածը և նման շատ ու շատ առաջադրանքներ:

Ակնառու է, որ նշված առաջադրանքները բավականաչափ հետաքրքիր ու նպատակային են, որոնք աշակերտին մղում են որոնողական, ինքնուրույն աշխատանքի: Երբեք ուսուցիչը չպետք է բավարարվի իր սաների տված պատասխաններով, միշտ պետք է ավելացնի նորանոր բառեր, բացատրություններ, մտքեր: Այսպես՝ եթե աշակերտը *դաժան* բառի դիմաց գրել է ասենք *անխիղճ, անգութ, վայրենի*, ապա ուսուցիչը պետք է ավելացնի նաև *բիրտ, ժանտ, դժխեմ, անողորմ, անողոր, անագործություն, բարբարոս, ողորկ* բառի համար՝ *կոկ, հղկուն, լերկ* և այլն, ու պահանջի դրանք անպայման գրանցել բառատնտրում և մտապահել: Կամ էլ հանձնարարել տանը բառարանի օգնությամբ լրացնել այդ շարքը: Նրանք ազատ կարող են բառարաններից օգտվել, քանի որ այդ բաժնում կան այնպիսի առաջադրանքներ, որտեղ պահանջվում է աշխատել բառարաններով: Ուրեմն՝ ուսուցիչը շատ բառերի բացատրություններ կարող է թողնել տանը՝ ինքնուրույն բառարանից օգտվելու: Այս մեթոդի առավելությունն այն է, որ աշակերտը ոչ թե պատրաստի պատասխանը կստանա, այլ ստիպված կլինի փնտրել և գտնել: Միանգամայն ճիշտ է այն տեսակետը, որ գիտակցաբար, սեփական ուժերով ձեռք բերած գիտելիքները ավելի լավ ու երկար են մտապահվում: Մի այլ տեսանկյունից էլ՝ 5-րդ կամ 6-րդ դասարանի աշակերտը ընդունակ չէ տալու այդ բառերի բոլոր բացատրությունները, հոմանիշները, հականիշները, գեղեցիկ և պատկերավոր մեկնաբանությունները և ընկալելու ամբողջական նյութը, բայց, այդուհանդերձ, ուսուցիչը պետք է խիստ հետևողական լինի աշակերտների խոսքը հղկելու, նրանց մեջ ինքնուրույն մտածելու, գեղեցիկ ու սահուն արտահայտվելու կարողություններ ձևավորելու գործում: Նույնը կարելի է անել նաև մնացած առաջադրանքների դեպքում: Իսկ որոշ աշխատանքներ, ինչպիսիք են՝ նկարագրիր, թե ինչ ապրումներ ունեցար այդ երկր կարդալիս, վերարտադրիր բանաստեղծության բովանդակությունը, նկարագրիր կամ բնութագրիր, պատմությունը համեմատիր ընտրված հատվածների հետ, ինչ ընդհանրություններ ես տեսնում, մեկնաբանիր բանաստեղծության տողերը և այլն, աշակերտներին մղում են ինքնուրույն, գիտակցաբար մեկնաբանելու, վերլուծելու, եզրակացություններ անելու: Իսկ գիտենք, որ վերլուծությունները աշակերտներին կօգնեն համեմատելու և հակադրելու երևույթը, առարկաները, գաղափարները: Անհրաժեշտության դեպքում վերլուծությունը, համեմատությունը, վերացարկումն ու ընդհանրացումը կարող են իրագործվել հենց ուսուցչի կողմից, կամ աշակերտի կողմից՝ ուսուցչի միջամտությամբ: Այս վերլուծությունների ժամանակ արդյունավետ մեթոդ է Վենի դիագրամը, որը նախատեսված է վերջինս մեթոդապես ճիշտ իրագործելու համար: Նման հարցադրումները նպաստում են նաև աշակերտների երևակայության, մտածողության զարգացման գործին: Կարևոր է ուսուցչի միջամտությունը, նա պետք է օգնի աշակերտին ճիշտ ընկալել և ճիշտ ու տրամաբանված արտահայտվել: Տեքստային աշխատանքներում որոշ առաջադրանքների կատարման համար պահանջվում է կիրառել քառաբաժան աղյուսակի մեթոդը: Նշենք դրանցից մեկը. պահանջվում է գծել աղյուսակ և լրացնել այն կարդալու ընթացքում՝ 1. ի՞նչ էի տեսնում, 2. ի՞նչ ձայներ էի լսում, 3. ի՞նչ էի գգում, 4. ի՞նչ մտքեր էին ծնվում: Այս բաժնում բավական շատ են նաև այն առաջադրանքները, որոնց կատարման համար պետք է կիրառվի երկու աստղ և մեկ ցանկություն մեթոդը, ինչպես՝ հեքիաթում գտիր հիմնական իմաստն արտահայտող երկու նախադասություն, փորձիր դեպքերի զարգացման և ավարտի քո տարբերակն առաջարկել: Կիրառելի է նաև մանրապատում մեթոդը, որի ընթացքում աշակերտը պետք է արագ պատասխանի առաջադրվող հարցերին: Այս աշխատանքները, ինչպես տեսնում ենք, մեկ նպատակ են հետապնդում՝ ձևավորել ու զարգացնել աշակերտների ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գրագետ ու պատկերավոր խոսք կառուցելու և արտահայտվելու կարողությունը: Այս ամենը փաստում է այն մասին, որ ուսուցիչը պետք է ստեղծի համագործակցության վրա հիմնված ուսուցման գործընթաց, որն էլ նրան կտա արդյունքների անգերազանցելի որակ: Քննարկվելիք բաժնում կան այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար աշակերտից ժամանակ է պահանջվում, նման առաջադրանքները նախատեսվում են հանձնարարել որպես տնային աշխատանք: Իսկ գիտենք, որ նպատակային

տնային աշխատանքները աշակերտներին մղում են ինքնուրույնաբար աշխատելու, սեփական մտածողությամբ եզրահանգումներ անելու: Այսպիսով՝ նախադրյալներ են ստեղծում նրանց մտավոր գործունեության, ինքնաարտահայտման համար: Հարցադրումների բազմազանությունը թույլ է տալիս աշխատել և՛ գրավոր, և՛ բանավոր տարբերակներով, իսկ դրանց ճիշտ ընտրությունը թողնվում է ուսուցչին:

Աշակերտի ինքնուրույն մտածելու, գործելու շրջանակները էլ ավելի ընդլայնելու համար ուսուցիչը ներքե չպետք է սահմանափակվի սոսկ դասագրքում տրված առաջադրանքներով: Այդ գործի իրականացման համար պետք է առաջին հերթին տանել համալիր աշխատանք, ընդ որում, աշխատանքի մեծամասնությունը պետք է կրի գործնական բնույթ: Արդեն նշել ենք, որ միջին օղակի 5-6-րդ դասարաններում մայրենիի ուսուցումը տարվում է ինտեգրված դասագրքերով, ուստի լեզվի դասընթացը աշակերտներին հնարավորություն է տալիս ստանալու անհրաժեշտ գիտելիքներ գեղարվեստական գրականության, այդ թվում՝ բանահյուսության արձակ ու չափածո տարբեր ժանրերի, ինչպես նաև հրապարակախոսական ու գիտահանրամատչելի գրականության տեսակների մասին: Լեզվական տարբեր իրողություններ ուսումնասիրելու նյութ է ծառայում տեքստը: Հետևաբար կարող ենք գրականության դասերի ընթացքում, գրական երկերն ուսուցանելիս, աշակերտի մեջ ձևավորել, զարգացնել ինքնուրույն, պատկերավոր մտածելու և խոսք կառուցելու կարողություն: Ի վերջո, եթե աշակերտը կարողանա բնագրի վրա աշխատելիս ընկալել և իրենը դարձնել գոնե մեկ կամ երկու բառ, ապա որոշ ժամանակ անց նրա մեջ կամաց-կամաց կկուտակվի որոշակի բառապաշար, կձևավորվի ինքնուրույն ու գեղեցիկ մտածելու, խոսք կառուցելու կարողություն: Քանի որ վերոնշյալում խոսվեց բնագրում միայն կարմիր և կապույտ գույնով գրված բառերի մասին, ավելացնենք, որ ոչ միայն նշված բառերն են պահանջում աշխատանք, այլև այն բոլոր բառերը, որոնք աշակերտի համար նոր են, անընկալելի: Ուսուցչի աչքից չպետք է վրիպի աշակերտին անծանոթ ոչ մի բառ, պետք է դրանք պարզաբանվեն մեկ առ մեկ: Իսկ արդյունքներն ավելի ոգևորող ու խոստումնալի կլինեն, եթե սովորած բառերը գրանցվեն բառատեսերերում, անընդհատ գործածության մեջ դրվեն և ժամանակի ընթացքում դառնան աշակերտի գործուն բառապաշարի մի մասը: Հետագոտական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ որոշ ուսուցիչներ ամեն դասաժամի աշակերտներից անգիր հարցնում են նախապես հանձնարարված բառերի հոմանիշները, բացատրությունները, երբեմն էլ՝ գործածել տալիս բառակապակցությունների կամ նախադասությունների մեջ: Սա ևս լավագույն միջոց է աշակերտի խոսքը հարստացնելու համար:

Այսպիսով՝ ընտրված ու քննարկման նյութ դարձրած առաջադրանքների էական նպատակն է ընդլայնել աշակերտի իմացության շրջանակները, զարգացնել նրանց տրամաբանությունը, ճանաչողական որակները, ինքնուրույն, գրագետ ու պատկերավոր խոսք կազմելու հմտությունները: Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ հայոց լեզվից տրվող բոլոր տեսակի առաջադրանքները կարող են լինել արդյունավետ, եթե դրանց կատարման ընթացքում ձևավորվեն ու զարգանան սովորողների վերոնշյալ հատկանիշները, որի համար էլ աշակերտը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ:

Իսկ սա խոսում է այն մասին, որ առանց լեզվական կանոններին ու օրենքներին տիրապետելու, աշակերտը չի կարող տեսականորեն գործնականում կիրառել և, առավել ևս, ունենալ գրական մշակված, կազմակերպված, ինքնուրույն ու պատկերավոր խոսք:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ծովինար Հասրաթյան - հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս
E-mail: tsovinar-asratyan@mail.ru

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեկիայի անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: